

Երեխա ծնվեց... Սպասված, ցանկալի... Նրան շրջապատում են սիրով և հոգատարությամբ, նրան են տրամադրում տան ամենալավ անկյունը, նրան ձգտում են խնամել բոլոր մեծերն ու փոքրերը: Մեր պապերն ու տատերը նորածնին դիմավորել են օրհնանքներով:

Խորհուրդներ ուսուցիչներին.

*Երեխաներն իրենց բնույթով ուրախություն և երջանկություն են (Վ. Հյուգո)*

Հարգելի ուսուցիչներ լինենք

1. Սիրալիր երեխայի հանդեպ: Մերը, գուրգուրանքը, ջերմ հայացքը թույլ է տալիս երեխային զգալ իրեն պաշտպանված, վստահ իր անձի նկատմամբ:
2. Ուսումնական գործընթացն այնպես պիտի կառուցել, որ երեխայի մոտ գիտելիքի պահանջ ձևավորվի, որ նա իր կատարած աշխատանքից հաճույք ստանա:
3. Եթե երեխան սխալ բան է կատարել, նրան քննադատելու փոխարեն քննադատեք նրա արարքները: Գնահատեք միայն գործողությունները, ոչ թե իրեն՝ երեխային:
4. Երեխային սովորեցրեք լինել լավատես: Չախողումը փորձ է, որն անհիրաժեշտ է ապագա նպատակներին հասնելու համար:
5. Յուրաքանչյուր երեխա ունի կոնկրետ ընդունակություններ: Երբեք երեխաների մասին մի մտածեք «անընդունակ է», մտածեք, «ընդունակությունները դեռևս բացահայտված չեն»:
6. Ջարգացրեք երեխայի երևակայությունը: Կյանքում բոլորն էլ հանդիպում են դժվարությունների, և պետք է կարողանանք դիմադրել և գլուխ հանել այդ դժվարություններից: Երևակայության շնորհիվ, ինչքան շատ տարբերակներ մտածենք, այնքան արդյունավետ կհաղթահարենք խոչընդոտները:
7. Սովորեցրեք գնահատել ժամանակը: Ամենաարժեքավորը, որ ունենք կյանքում ժամանակն է: Ինչքան արդյունավետ օգտագործենք այն, այնքան ավելի լավ կլինի մեր կյանքը:
8. Երեխաների մեջ զարգացրեք պատասխանատվության զգացում: Երեխան դեռ փոքր տարիքից պիտի իմանա, որ ինքը պատասխանատու է իր արարքների համար:

9. Խրախուսեք երեխայի լավ արարքը: Այն հզոր զենք է: Հիշեք, գովասանքն ու հուզական աջակցությունը («Կեցցես», «Շատ լավ կատարեցիր աշխատանք») կարող են նկատելիորեն բարձրացնել մարդու գիտական նվաճումները:
10. Կռեկտիվում դաստիարակեք ճիշտ փոխհարաբերություններ, մի ընդգծեք ոմանց հաջողությունները, մյուսների անհաջողությունները, մի՛ վիրավորեք երեխաներին ամբողջ դասարանի առջև, նկատեք թույլերի՝ նույնիսկ ամենափոքր հաջողությունները:
11. Երեխաներին պետք է սիրել ամբողջ սրտով և նրանց այդպես սիրելու համար, պետք է սովորել նրանցից՝ ինչպես հարկն է դրսևորել այդ սերը: Դպրոցի յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր դաս պետք է մանկավարժի կողմից նվեր լինի երեխաներին: Մանկավարժի հետ յուրաքանչյուր հանդիպում պետք է երեխային ուրախություն և լավատեսություն ներշնչի:

Ասածիցս բխում են որոշակի խորհուրդներ.

Եվ մի քանի խորհուրդներ էլ մեզ՝ մանկավարժ ծնողներին.

1. Սովորի՛ր սիրել ուրիշի երեխային: Երբեք ուրիշի երեխային մի արա այն, ինչ չէիր կամենա, որ անեին քո երեխային:
2. Միրի՛ր քո երեխային ինչպիսին էլ, որ նա լինի՝ անտաղանդ, անհաջողակ, սգեղ:
3. Մի՛ ակնկալիր, որ երեխադ նման կլինի քեզ կամ կլինի այնպիսին, ինչպիսին դու ես ուզում: Օգնի՛ր նրան լինել այնպիսին, ինչպիսին ինքն է:

Միշտ էլ ուշադիր եմ եղել այն աշակերտների հանդեպ, ովքեր մեկուսանում են, չեն խաղում ու շփվում ընկերների հետ: Առավել ուշադիր եղա և նպատակասլաց աշխատեցի այն ժամանակ, երբ իմացա, որ տղաս չէր խաղում ու շփվում (չնայած բակում շատ ընկերներ ուներ): Իհարկե, հիմա այդպիսին չի, խաղում է, շփվում, ընկերներ ունի:

Որքան էլ մանկավարժ-ծնողը օժտված է մանկավարժական նրբանկատությամբ, զինված է տեսական գիտելիքներով, այնուամենայնիվ հանդիպում են դժվարություններ, թե նրան, թե ուսուցչի երեխաներին:

Հաճախ ուսուցիչ ծնողը ուժեղ վերահսկողություն (թե ուսումնական, թե վարքային) է ցուցաբերում իր երեխայի հանդեպ: Այս երևույթի հոգեբանական բացատրությունը կայանում է նրանում, որ ուսուցչի պատկերացմամբ իր երեխան իր «դեմքն է»: Այստեղ խոսում է կնոջ ինքնագնահատականը, որը կապված է լավ մանկավարժ-լավ ծնող կերպարների հետ:

Երեխայի դժվարությունների դեպքում (ուսումնական, վարքային) կոնֆլիկտների առաջացումը ուսուցիչ ծնողի և ուսուցիչների միջև: Եթե երեխան ունի դժվարություններ, պետք է փորձել նրան օգնել, ինչպես մյուս բոլոր երեխաներին: Եվ օգնությունը բնավ այն չէ, որ բոլոր դասամիջոցներին ծնողին տեղեկացնում են երեխաների խնդիրների մասին:

Իսկ ինձ համար

Առավելություն է այն փաստը, որ աղջիկս իմ կողքին է, իմ աչքի առաջ, քանի որ նա ինձ անբացատրելի դրական էներգիա է հաղորդում, միշտ կիսվում է իր հիասքանչ տպավորություններով, դրական, անուշ պահվածքը ինձ ուժ, էներգիա է տալիս՝ առավել լավ անցկացնել ուսումնադաստիարակչական աշխատանքը: